Եղիշե Չարենց

**ՈՒԹՆՅԱԿՆԵՐ ԱՐԵՎԻՆ**
Արփիկին

1921, ՄԱՅԻՍ, ԵՐԵՎԱՆ

**Ցանկ**

Նետե՛լ է երկաթե մի ձեռք
Այն արև՛ն է
Աղջկա կոնքերի նման
Ինչ որ լավ է
Տեսնում եմ
Ինչպես շոգ
Ես գիտեմ
Արնակեզ
Կարծես ես ճամփա եմ ընկել
Իմ ուղեղը բորբոք, կրակուն
Բայց ինչո՞ւ միայն կիրք ու կին
Փայլում են ոսկի սվիններ
Ու նորից ելած խնդավառ
Միայն խմիր արեգակի բույրը ջինջ
Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին
Հոսում է տաք, ինչպես հեշտանք, կամ ձույլ ոսկի

*

Նետե՛լ է երկաթե մի ձեռք
Դեպի վեր ոսկի մի ծնծղա.
Բռնկվել է ոսկի ծնծղան,
Դարձել է արնածոր մի վերք:
Վառվել է երկնքում հակինթ
Ու ծորում է արյունը յուր կեզ, —
Զոհվե՛լ է երկնքում վճիտ. —
Ինչքան լա՛վ է հատնումը հրկեզ...

*

Այն արև՛ն է՝ կարմի՛ր ու հասուն,
Կախվել է, որպես վառ մի միրգ,
Կարոտող շրթեր է ուզում,
Բորբոքում է գրգիռ ու կիրք:
Շոգ շրթեր ու կոնքեր է ուզում,
Գգվանքներ արնաքամ ու տաք, —
Այն արևն է՝ կարմիր ու հասուն,
— Ինչքան լա՛վ է հատնումը հստակ:

*

Աղջկա կոնքերի նման
Երազուն, կիզուն ու հասուն՝
Վառվում է արևի ծնծղան
Աշխարհի անհո՛ւն երազում:
Դաշտերից նժույգներ են վազում,
Վրնջում են կրքոտ ու վառ, —
Աղջիկները չար խոսք են ասում —
Ու խնդում է արևը խելառ...

*

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում,
Ինչ որ լավ է՝ միշտ վառ կմնա.
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:
Մոխրացի՛ր արևի հրում,
Արևից թող ոչինչ չմնա, —
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛:

*

Տեսնում եմ՝ արևի վրա
Վրնջում են ձիեր ոսկենալ,
Մերկացել են աղջիկները խելառ,
Ու ծծում են շրթերը նրա:
Բորբոքվել են շրթերը շոգ,
Համբուրում, բուրում են կեզ,

Վախենում են — մնան անշող. —
— Ախ, այնպե՛ս ուզում եմ — քեզ:

*

Ինչպես շոգ, ճնշող ոսկի,
Բրոնզեձույլ, հասուն, հոսուն —
Արևի տապն է հոսում,
Ինչպես շոգ, ճնշող ոսկի:
Ախ, հոգիս մի նո՛ր խոսքի
Արևոտ շունչ է կիզում —
Ինչպես շոգ, ճնշող ոսկի,
Բրոնզեձույլ, հասուն, հոսուն:

*

Ես գիտեմ՝ արևի վրա
Հավաքվում է վերք ու ժանգ,
Հատնումի տոթ մի հոսանք —
Անհատնում, ա՛լ մի քուրա:
Հատնելով լույսը իրա
Արնոտում է կուրծք ու ծիծ. —
Ինչ կանես — արնով արա՛,
Թող լինի՛ վե՛րք ու քրքիջ:

*

Արնակեզ, սուր մի նիզակ
Զարկեցի ալ վահանիդ. —
Աշխարհքում էլ ի՞նչ կանի
Իմ հոգին փառք ու պսակ:
Դու արև, վառ մի նշան,
Իմ հոգում գամված մի նիշ, —
Միայն դո՛ւ, լույս ու շուշան —
Եվ չկա ո՛չ մի ուրիշ:

*

Կարծես ես ճամփա եմ ընկել
Երկնքի դաշտերում կապույտ
Ու գնում եմ, զվարթ ու անփույթ,
Եվ ունեմ լուսե մի ընկեր:
Նա և՛ կին է, և՛ քույր, և՛ հոգի,
Այրվում և այրում է խենթ.
Խառնվել եմ կյանքին ամենքի —
Եվ իմ կյանքը հրա՛շք է ու տենդ:

*

Իմ ուղեղը բորբոք, կրակուն՝
Ալ գծեր ծփծփան, հուրհուր.
Լափլիզում, սրբում է մի հուր
Իմ ուղեղը բորբոք, կրակուն:
Հղանում են դեմքեր ոսկեման,
Գալարվում են կրքեր բորբոք, —
Ախ, ուղեղս — ա՛րև ալվլան
Ու աշխարհը — ցնորք է մի շոգ:

*

Բայց ինչո՞ւ միայն կիրք ու կին,
Միայն շոգ ու հեշտանք անուշ.
Վառվում է զոհերի հոգին,
Փռվում է տխրություն ու մուժ...
Ինչքան տա՛ք արյուն է հոսել,
Ոսկեծուփ հեղեղներ արյան,
Նո՛ւյն արևն է կարմիր ու լուսե,
Նո՛ւյն անուշ աշխարհի՛ վրա...

*

Փայլում են ոսկի սվիններ,
Պսպղում է ոսկի մի վահան,
Ոսկեդեմ արևի վրա
Փայլում են ոսկի սվիններ:
Ախ, ինչ լա՛վ է զինվել ու զինել
Արևով, արյունով, — ահա

Ոսկեդեմ արևի վրա
Փայլում են ոսկի՛ սվիններ...

*

Ու նորից ելած խնդավառ,
Օրերի կապույտ բանտում,
Ցրում է լո՛ւյս ու գոհար,
Ծփում է ու վառ խնդում:
Ով որ կա խեղճ ու անտուն,
Ով որ կա մերկ ու վհատ —
Թող այսօր խնդա խնդուն,
Թող լինի լուրթ ու զվարթ...

*

Միայն խմիր արեգակի բույրը ջինջ, —
Արև՛ դարձիր — արևահամ — ամոքիչ:

Ուրիշ ոչինչ չի՛ կամենա սիրտը իմ.—
Ողջը — հրին, արնանման արևին:

Սուր սվիններ, բուրմունք ու սեր, երգ ու գույն,
Տենդը արյան — արևահամ խնդություն:

Ու նժույգներ, ոսկի ու ծափ, կանչ ու ճիչ. —
Ո՞վ է քեզ պես արևահամ — ամոքիչ...

*

Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին
Ու վերևից խնդաց զվարթ ու ոսկեձայն. —
Հազա՛ր վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,
Հազա՛ր խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան:
Քաղցր ծփաց հեշտանք ու տապ, թույն ու գրգիռ,
Դաշտերը խաս ծաղիկներով ծփծփացին. —
Աշխարհը — ալ, նարնջագույն, վառքը — կարմիր,
Ողջը — հրա՛շք ու խնդությո՛ւն արեգնածին...

*

Հոսում է տաք, ինչպես հեշտանք, կամ ձույլ ոսկի,
Հոսում է ծանր, ու հորդահոս, ու արնավառ.
Լցվում է թեժ խնդությունով կուրծքը հասկի.
Օրերը — տոթ, ձիերը — վառ, վազքը — խելառ:
Լո՛ւրթ երկինքներ՝ իջած հասուն երկրի վրա,
Բարձր ճիչեր, ու հրդեհներ, ու ծիածան. —
Վառվում է շոգ կաթսաներում կյանքը քուրա. —
— Ախ, վա՛յ նրանց, որ չապրեցին ու չտեսան...

1921, մայիս, Երևան